600.0024.10.09.99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 սեպտեմբերի 1999 թվականի №24

քաղ. Երևան

«Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության լիցենզավորման կարգը» հաստատելու մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է՝**

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության լիցենզավորման կարգը» (կցվում է):
2. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարությանը՝ ապահովել սույն որոշման հրապարակումը «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում»:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի

նախագահ՝ **Վ. Մովսեսյան**